

Արագածոտնի մարզպետն ընդունեց Արգենտինայի դեսպանին 08.11.2013



Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանը Նոյեմբերի 8-ին ընդունեց ՀՀ-ում Արգենտինայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Դիեգո Էրնեստո Ալվարես Ռիվերային և Նրա տիկնոջը՝ Մարիաննա Ալվարես Ռիվերային: Մարզպետը ողջունեց դեսպանի այցը և ասաց, որ այն լավ հիմք կհանդիսանա Արագածոտնի մարզի և Արգենտինայի Հանրապետության միջև ծավալվող համագործակցության:

Դեսպանը շնորհակալ եղավ ընդունելության համար և նշեց, որ Հայաստանում իր աշխատելու մեկամյա ժամանակաընթացքում նա փորձել է Հայաստանին ծանոթանալ ամբողջությամբ, այդ նպատակով ճանաչողական այցեր է կատարում դեպի մարզեր: Այդպիսով համագործակցության նոր հնարավորություններ և ծրագրեր են մշակվում:

Սարգիս Սահակյանն ընդհանուր գծերով ներկայացրեց մարզի նկարագիրը: Նա ասաց, որ մարզի տնտեսության մեծամասնությունը, շուրջ 85%-ը, գյուղատնտեսական է: Առավելապես զարգացած են այգեգործությունը, անասնապահությունը: Այդ ոլորտներում էլ մարզպետը Արգենտինայի Հանրապետության կողմից գործնական համագործակցության եզրեր է տեսնում: Նա նշեց, մասնավորապես բրդի և կաշվի, ինչպես նաև մարզում արտադրվող մրգերի, բանջարեղենի վերամշակման արտադրության հնարավորություններ ստեղծելու իր պատրաստակամությունը: Մարզը մեծ քանակի վարելահողեր և արոտավայրեր ունի, ուստի լայն հնարավորություններ կան աշխատանքներ ծավալելու նաև այգեգործության մեջ:

Անդրադառնալով հայ-արգենտինական վաղեմի բարեկամությանը, երկուստեք կարելովեց այդ համագործակցության ներկա ժամանակաշրջանը, երբ այն դրսևորվում է առավելագույնս ընդգրկուն և գործնական:

Դեսպանն ու Նրա տիկինը, փոխմարզպետ Նունե Մովսիսյանի ուղեկցությամբ այցելեցին մարզի պատմամշակութային տեսարժան վայրեր, եղան Բյուրականի աստղադիտարանում: